ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2020 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2020 թվականի հունվար ամսվա ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3003.6 մլն դրամ՝ պլանավորված 2900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 3.6 տոկոսով կամ 103.6 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 119 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 4 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 7 ստուգում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և լուծարային, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 39.2 մլն դրամի չափով հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Իրականացված հսկողական միջոցառումների շրջանակներում արձանագրվել է ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 1 դեպք:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 82 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 63-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 7-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, 3-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման և 9 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան են ներկայացվել 1 բռնագանձման հայց՝ 2060.3 հազ. դրամ գումարով և վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ 5 հայցադիմում՝ 70 հազ. դրամ գումարով:

Դատական մարմինների կողմից նույն ժամանակահատվածում կայացվել է 11 վճիռ՝ 22261.1 հազար դրամ ընդհանուր գումարով, որից 7-ը՝ 22191.1 հազ. դրամ գումարով, բռնագանձման հայցերի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 73 վարչական գործով սահմանվել է 837 հազ. դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 12594 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 11088:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 80 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում հունվար ամսում կատարվել է վերադարձ 146 վարձու աշխատողի՝ 21.9 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 21 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ու դրոշմապիտակների և ակցիզային դրոշմանիշերի վերագրման էլեկտրոնային համակարգերի մշակումն ու ներդրումն ապահովելու նպատակով ԱՀ ֆինանսների նախարարի հրամանով ձևավորվել են աշխատանքային խմբեր:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում նախարարության 1 աշխատակից մասնակցել է ՀՀ ՊԵԿ-ի կողմից օպերատիվ-հետախուզության ստորաբաժանման աշխատակիցների համար կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Հաշվետու ամսվա ընթացքում երկու կառույցների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հաշվետու ամսում կայացել է ԱՀ ֆինանսների նախարարի մամուլի ասուլիսը, որի ընթացքում նախարարն ամփոփել է նախորդ տարվա տնտեսական զարգացումների և հարկաբյուջետային քաղաքականության արդյունքներն ու ներկայացրել առաջիկայում ծրագրվող աշխատանքները:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկը:

Հաշվետու ամսում շարունակվել է կուտակային կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակից քաղաքացիների վճարված սոցիալական վճարների գումարների վերահաշվարկի գործընթացը, որի շրջանակներում 93 քաղաքացու վերադարձվել է սոցիալական վճարի ավել վճարված մասը:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 747 տեղեկանք:

Հունվար ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 297, ելքագրվել՝ 152 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 7 գրություն, որից 3-ը՝ էլեկտրոնային եղանակով: